ընկած է Թիրիքեարաը. դա մի փոքրիկ գիւղ է, փուած բանաստեղծական ձորի մէջ, որ ամբողջապէս շրջապատուած է քառակուսի հողէ պարսպով, որն ունի միայն մի դուռ։ Ա.հա այդ պարսպի մօտ գտնուում է սառնորակ մի աղբիւր. դա գիւղի զարդն է, որը շնորհիւ իր առատ ջրի մի փոքրիկ առու է կազմում և ոլորապտոյտ հոսելով ոռոգում է Թիրիքեարաի արտերը, որոնք փուած են գիւղին կից։

Հողատիրութեան ձևը խանական է. պատկանում է Հօճաբը Աղուլի խանին. գիւղացիները մշակում են նրա հողը և բերքի $^1/_3$ մասը տալիս են նրան, բացի այդ տարեկան վճարում են.

Մարդաղլուի	5 ղուռն.	Զորս ոչխարին	2 ղուռն.
Կովին	3 »	Էշին	3 »

Հայերի այստեղ հաստատուելը 20—30 տարուայ պատմութիւն է։ Այժմ հայ ընտանիքների թիւը հասնում է 25-ի՝ 183 բնակչով, որի 98-ը արական է և 85-ը իգական։ Գիւղի եկեղեցին է Ս. Յովհաննէս. դպրոց չկայ։

Հայերն այստեղ համեմատաբար աւելի բարեկեցիկ վիճակի մէջ են և ազատ կեղեքումներից և հարստահարութիւններից։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	20
2	Չունևոր	40
3	Միջակ	90
4	Ունևոր	33
5	Հարուստ	--
	Ընդամենը	183

ԽՕՋԻ-ՂԱԼԱ

Այս փոքրիկ գիւղը գտնուում է Թիրիքեարտից դէպի արևմուտք, մէկուկէս ֆարսախ հեռու, սարի լանջին, մի ընդարձակ դաշտի վրայ։ Գիւղը բաւական գեղեցիկ դիրք ունի, շրջապատուած է սիրուն ծառուղիներով։ Աղգաբնակչութիւնը բաղկացած է 15 տնից 75 շնչով, որի 43-ը արական է և 32-ը իգական։ Նրանք գաղթել են Հին—Ջուղայից 1606